



Գ Լ Ո Բ Ո Ի Մ

Վ Ե Ր Լ Ո Ի Ծ Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ԼՂՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԻԾ
(ՊԱՏՄԱԿԱՆ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ)

ԶԱՎԱԽՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

7

Նոյեմբեր, 2006

«ՆՈՐԱՎԱՆՔ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Գ Լ Ո Ւ Բ Ո Ւ Մ

Վերլուծական տեղեկագիր

Г Л О Б У С

Аналитический бюллетень

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նոր «Սառը պատերազմ» և «գազման ռազմավարության» վերափոխումը	5
ԱՄՆ պաշտպանության նոր նախարարը և իրանական հիմնահարցը	9
«Դաշնային» Իրաքի ստեղծումը	12
Страны ОДКБ вооружают противника Армении	16
Թիֆլիսահայ համայնք. վերջաբանի փոխարեն	19
Միլիտարիստ համայնքի արդի մի քանի հիմնահարցերի շուրջ	23
Ситуация на Северном Кавказе	27
Обмен населением между государствами как элемент долгосрочного урегулирования этнополитических конфликтов	36
<i>Приложение 1. Устав организации договора о коллективной безопасности</i>	<i>40</i>

ՆՈՐ «ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄ» ԵՎ «ԶՍՊՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ» ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ

Այսօր Միացյալ Նահանգներ-Ռուսաստան հարաբերությունների բնույթը երբեմն նմանեցվում է նրան, ինչ գոյություն ունեւր 20-րդ դարի երկրորդ կեսին ընթացող Առաջին «Սառը պատերազմի» (ՄՊ) (այս բառակապակցության եզրաբանության մասին տե՛ս հավելվածը) դարաշրջանում: Այդ պատերազմը կոշտ հակամարտություն էր երկու աշխարհագաղափարախոսական հայեցակարգերի և աշխարհաքաղաքական նախագծերի միջև, որոնց համակիրները (երբեմն՝ իրենց կամքին հակառակ) համախմբվել էին գլխավոր դերակատարների՝ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի շուրջ: Հարկ է նկատել, որ վերոնշյալ տերությունների մրցակցությունը սկիզբ էր առել դեռևս Երկրորդ համաշխարհայինի տարիներին. այն ժամանակվա «դաշնակիցները» պայքարում էին ոչ միայն ընդհանուր թշնամի Գերմանիայի, այլև հաճախ նույն եռանդով՝ միմյանց դեմ: Այսինքն՝ ԱՄՆ-ԽՍՀՄ «դաշնակցային» փուլի հարաբերություններն արդեն պարունակում էին ապագա դասական Սառը պատերազմի բաղադրիչների մի զգալի մասը:

Նման իրավիճակը կարելի է օրինաչափ համարել, քանի որ Երկրորդ համաշխարհայինում ԽՍՀՄ-Գերմանիա առճակատումը և ԽՍՀՄ-ԱՄՆ-Մեծ Բրիտանիա դաշինքը կարելի է գնահատել որպես ինչ-որ չափով «քաղաքական անտմալիա»: Աշխարհաքաղաքական և գաղափարախոսական տեսանկյուններից ԽՍՀՄ-ը և Գերմանիան ունեին խորքային ընդհանուր շահեր, որոնք գրեթե բացակայում էին ԽՍՀՄ-ԱՄՆ-Մեծ Բրիտանիա պրագմատիկ, ստեղծված իրադրությունից բխող հարաբերություններում: Ըստ էության սկզբունքային հակասություններն առկա էին Գերմանիայի և ԱՄՆ-Մեծ Բրիտանիայի միջև: Այս համատեքստում ԽՍՀՄ-Գերմանիա առճակատումը կարելի է գնահատել որպես անգլո-ամերիկյան դիվանագիտության հաղթանակ: Այս իրողության ընկալումը խիստ կարևոր է արդի քաղաքական գործընթացները համարժեք գնահատելու համար:

Վերադառնալով այսօրվա իրողություններին՝ փորձենք հաշվի առնել այն սկզբունքային վերափոխումները, որոնք տեղի են ունեցել աշխարհում ԽՍՀՄ փլուզումից հետո: Ներկա ժամանակաշրջանը սահմանվում է որպես միաբևեռ համակարգից բազմաբևեռի անցում, և այդ «անցումային» փուլում զուգահեռաբար ընթանում են երկու գործընթացներ.

- Տեղի է ունենում այն հիմնական աշխարհաքաղաքական միավորների ռազմաքաղաքական, տնտեսական և գաղափարախոսական կայացումը, որոնք արդեն պայմանավորում են կամ մոտ ապագայում պետք է պայմանավորեն միջազգային հարաբերությունների բազմաբևեռ տրամաբանությունը:
- Նկատվում է Միացյալ Նահանգների գերակայության նվազում. այսօր ոչ միայն այլոց, այլև ամերիկյան քաղաքական ընտրանին ընդունում է, որ անգամ ԱՄՆ-ի նման գերհզոր տերությունն ի զորու չէ միայնակ «ղեկավարել» աշխարհը և արդեն մշակում է «կազմակերպված նահանջի» սցենարներ (նման մոտեցման մասին են վկայում Իրաքից ամերիկյան զինուժի դուրսբերման վերաբերյալ արդեն հաճախակի դարձած քննարկումները քաղաքական և փորձագիտական հարթություններում):

Վերոնշյալ իրողություններն ուրվագծում են այն բազմաբևեռ համակարգը, որն արդեն ինչ-որ չափով առկա է և որում միջազգային հարաբերությունների «սառըպատերազմյան» տրամաբանությունը գործում է արդեն այսօր: Միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ Առաջին և ներկայումս ընթացող Երկրորդ սառը պատերազմներն ունեն ինչպես ընդհանրություններ, այնպես էլ սկզբունքային տարբերություններ: Փորձենք համառոտ ներկայացնել այդ նմանությունները և տարբերությունները:

Մինթետիկ՝ քաղաքակրթական կամ ազգային բաղադրիչներով գաղափարախոսություններ և տնտեսական համակարգեր. Առաջին *ՄՊ-ն* տրամազծորեն հակադիր, ունիվերսալ կոչվելու հավակնություններ ունեցող, երկու տնտեսական-գաղափարախոսական մոդելներին՝ «ազատական ժողովրդավարական» և «կոմունիստական-տոտալիտար», հակամարտություն էր: Ներկայումս պատկերն այլ է:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե ԽՍՀՄ փլուզումից հետո զլոբալ հարթությունում գերակայում է ազատական տնտեսական մոդելը: Սակայն այդ մոդելը միանգամայն այլ բովանդակություն և ձև է ստանում տարբեր քաղաքակրթական գոտիներում ու առանձին երկրներում¹: Նշենք նաև, որ ի տարբերություն նախկինի, այսօր համաշխարհային տնտեսական դերակատարների թվին են դասվում նաև վերազգային կորպորացիաները, որոնց կառուցվածքը և գործելաձևը հաճախ տոտալիտար բնույթ են կրում և որոնց սեփական շահերը երբեմն գերակայում են իրենց «գրանցման երկրի» ազգային շահերի նկատմամբ:

Նույնը կարելի է պնդել նաև գաղափարախոսական հայեցակարգերի մասին: Աշխարհում կարծես թե իշխում է ժողովրդավարությունը. «մաքուր կոմունիզմին» հավատարիմ են մնացել թերևս միայն Հյուսիսային Կորեան և որոշակի մոտավորությամբ՝ Կուբան: Այսօր անգամ «սոցիալիստական» Չինաստանը հրաժարվել է «դասակարգային պայքարի» և կոմունիստական գաղափարախոսության էությունը հանդիսացող այլ կարգախոսներից և կառուցում է «հարմոնիկ հասարակարգ», իսկ Արևելքի «թագավորական տներին» կից գործում են պառլամենտներ և ժողովրդավարական այլ ինստիտուտներ: Միննույն ժամանակ, «հաղթած ունիվերսալ ժողովրդավարական մոդելի» մասին խոսելը հիմնավորված չէ, քանի որ «ժողովրդավարություն» հասկացությունը տարբեր քաղաքակրթական գոտիներում և երկրներում ընկալվում ու կիրառվում է հաճախ միանգամայն տարբեր ձևերով և բովանդակությամբ: Այդ առումով հատկանշական է, որ անգամ «մաքուր», «ունիվերսալ» ժողովրդավարության և ազատականության գլխավոր ջատագովները՝ ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան, իրենց նախկին հակառակորդ կոմունիստական մոդելից փոխառել են որոշ տոտալիտար բաղադրիչներ և, ի լրումն, գաղափարախոսական ոլորտում ձեռք են բերել գերազգային՝ այսպես կոչված «ուլտրանացիոնալիստական» երանգներ:

Վերոնշյալ իրողությունները վկայում են այն մասին որ զլոբալ հարթությունում «ունիվերսալ և մաքուր» ազատական տնտեսական մոդելները և ժողովրդավարական գաղափարախոսական հայեցակարգերը, չնայած *ՄՊ-ում* տարած հաղթանակին, չեն գերակայում: Դրանց փոխարեն գործում են այդ մոդելների մոդիֆիկացված, որոշակի առումներով՝ *սինթետիկ*, քաղաքակրթական և ազգային արժեքներ արտահայտող գաղափարախոսություններ² ու տնտեսական մոտեցումներ: Արդյունքում՝ այսօր աշխարհում գործող գաղափարախոսական և տնտեսական համակարգերն ունեն և՛ ընդհանրություններ, և՛ սկզբունքային հակասություններ: Այդ քաղաքակրթական և ազգային բնույթի հակասությունների համախումբը թելադրում է արդի միջազգային հարաբերությունների «սառըպատերազմյան» տրամաբանությունը:

«Զսպման քաղաքականություն-2». Ինչպես հայտնի է, ամերիկյան քաղաքականությունը *Առաջին ՄՊ-ի* տարիներին առաջնորդվում էր «զսպման ռազմավարության» հայեցակարգով³: Նման ռազմավարությունն արդարացված էր և ուներ օբյեկտիվ հիմնավորումներ: Երկրորդ համաշխարհայինում ԽՍՀՄ-ը բացարձակ ռազմական հաղթանակ էր նվաճել: Արդյունքում՝ ստեղծվել էր տարածքային առումով նախադեպը չունեցող «կոմունիստական կայսրություն», որի սահմանները ձգվում էին Պեկինից մինչև Բեռլին: Այդ կայսրությունը զինված էր հարձակողական գաղափարախոսությամբ, ուներ պատերազմում թրծված հսկայական զինված ուժեր, որպես ֆաշիզմին հաղթած երկիր ուներ բարձր միջազգային հեղինակություն և չնայած պատերազմում կրած մարդկային ու նյութական մեծ կորուստներին՝ արագորեն վերականգ-

¹ St' u, օրինակ, *Стивен Роуэфилид*, «Сравнительная экономика стран мира», РОССПЕН, Москва, 2004.

² Այս համատեքստում ուշադրության արժանի է վերջերս Ռուսաստանում տարածում գտած «ինքնիշխան ժողովրդավարության» վերաբերյալ գաղափարախոսական թեզը:

³ Նկատենք, այդ քաղաքականությունը բնորոշ էր ԱՄՆ-ԽՍՀՄ հարաբերությունների առաջին փուլին. 70-ականներից ռազմավարական նախաձեռնությանը տիրապետում էին արդեն ամերիկացիները, և «զսպման քաղաքականություն» եզրն այդուհետ ավելի շուտ քարոզչական բնույթ էր կրում:

նում էր իր տնտեսությունը: Միննույն ժամանակ, ԽՍՀՄ քաղաքական ղեկավարությունը բավարարված չէր պատերազմի արդյունքներից. համարվում էր, որ աշխարհաքաղաքական ձեռքբերումները հատկապես արևմտյան և հարավային ուղղություններով կարող էին և ավելի մեծ լինել:

Վերոնշյալի համատեքստում միացյալ Արևմուտքը և նրա առաջատար Միացյալ Նահանգները, բնականորեն, պետք է համախմբեին իրենց ռեսուրսները նման գերիզուտ տերության էքսպանսիան զսպելու նպատակով: Նման ռազմավարություն վարելու համար որպես հիմնական ռազմական գործիք կիրառվեց միջուկային զենքը: Վերջինիս մենատիրական տիրապետումը ԱՄՆ-ի կողմից *ՄՊ-ի* առաջին փուլում միակ արգելանքն էր, որը զսպեց ԽՍՀՄ հավակնությունները, օրինակ, Իրանի և Թուրքիայի նկատմամբ: Հետագայում հավասարակշռությունը միջուկային սպառազինության ոլորտում գործնականում բացառեց ԱՄՆ-ԽՍՀՄ անմիջական առձակատումը:

Ներկայումս պատկերը տրամագծորեն փոխվել է: Որպես հարձակողական, ռազմական բացարձակ գերակայություն ունեցող տերություն հանդես է գալիս ԱՄՆ-ը: Այդ գերտերության քաղաքական ղեկավարությունը նույնպես չբավարարվեց *Առաջին ՄՊ-ում* տարած իր բացարձակ հաղթանակով, որի արդյունքում գլոբալ հարթությունում հաստատվեց Միացյալ Նահանգների քաղաքական առաջատարությունը: 2001թ. սեպտեմբերի 11-ին սկսված «հակահաբեկչական պատերազմը» և դրա բաղադրիչները՝ տարաբնույթ «սև ցուցակներ» և «չարի առանցքներ» հրապարակելը, Աֆղանստանի և Իրաքի դեմ իրագործած հարձակումները հավակնում էին գլոբալ մակարդակով վերահսկողություն հաստատել հումքային և մարդկային ռեսուրսների վրա: Ներկայումս այլ քաղաքական դերակատարների ջանքերն ուղղված են «զսպելու» այդ գերտերության հավակնությունները և պահպանելու սեփական ինքնիշխանությունը, այսինքն՝ «զսպման քաղաքականությունը» այսօր վարվում է ԱՄՆ-ի դեմ: Կարելի է ամրագրել, որ *ԱՄՆ-ի դեմ մղվող արդի Մառը պատերազմը, փաստորեն, պայքար է քաղաքակրթական կամ ազգային ինքնիշխանության համար:*

Հատկանշական է, որ ինչպես և նախկինում, այսօր էլ միջուկային զենքը «զսպման» գլխավոր գործիքներից մեկն է: Համաձայն փորձագիտական հանրության մոտեցումների՝ դեռևս ոչ վաղ անցյալում՝ ինստիտուցիոնալ թվականներին, Ռուսաստանի միջուկային ներուժը միակ գործոնն էր, որը պահպանեց այդ տերության ինքնիշխանությունը: Այս կամ այն չափով նույն իմաստն ունեն Իրանի, Հյուսիսային Կորեայի (վերջինիս պարագայում՝ խեղաթյուրված տեսքով) և նրանց օրինակին հետևել փորձող այլ երկրների (որոնց թիվն անընդհատ մեծանում է) միջուկային ծրագրերը:

Միննույն ժամանակ, «միջուկային զսպման» ռազմավարությունը (որի գլխավոր տեսաբաններից է եղել Հենրի Քիսինջերը) նույն Իրանի կամ Հյուսիսային Կորեայի պարագայում, զոնե առայժմ, այն *«սիմետրիկ զսպման»* մեխանիզմը չէ, որը գոյություն ունեւր ԱՄՆ-ԽՍՀՄ սպառազինությունների մրցավազքի դարաշրջանում¹: Այդ փուլում ենթադրվում էր, որ միջուկային հարվածի արդյունքում կողմերը ջախջախիչ հարվածներ և անվերականգնելի կորուստներ են հասցնելու միմյանց: Ներկայումս միջուկային երկրների մոտեցումներն ավելի շուտ կրում են *ասիմետրիկ* բնույթ և հանգում են «մասնակի հատուցման» հարվածին, որի հետևանքով կարող են խոշոր կորուստներ կրել ԱՄՆ ռազմական բազաները կամ դաշնակիցները, իսկ որոշ պարագաներում՝ ուղղակի շրջակա միջավայրը:

Գագիկ Հարությունյան
«Նորավանք» հիմնադրամ

¹ Առաջին ՄՊ-ի ընթացքում, հատկապես Մոսկվայի կողմից, երբեմն նույնպես հնչեցվում էր ԱՄՆ սպառնալիքներին *«ասիմետրիկ»* պատասխան տալու պատրաստակամությունը: Սակայն այդ «ասիմետրիան» տեխնիկական իմաստ ուներ և չէր խախտում «սպառազինությունների մրցավազքի» *«սիմետրիկ»* զարգացումը:

«Մառը պատերազմ» բառակապակցության եզրաբանության վերաբերյալ

«Մառը պատերազմ» բառակապակցության ծագման վերաբերյալ հետազոտողների մեկնությունները երբեմն տարբեր են: Նախկինում գրեթե բոլոր աղբյուրներում մատնանշվում էր, որ *ՄՊ* արտահայտությունն առաջին անգամ օգտագործել է ամերիկյան ձեռնարկատեր և քաղաքական գործիչ **Քեննարդ Բարուխը** 1947թ. Սենատում ունեցած իր ելույթում: Սակայն վերջերս ԱՄՆ Պետդեպարտամենտը սպասարկող կայքում (*Washington ProFile, #89(720), 29.10.2006*) զետեղված տեղեկության համաձայն, այդ եզրի հեղինակությունը տրվում է անգլիացի հանրահայտ գրող և հրապարակախոս **Ջորջ Օրուելլին, որն օգտագործել էր այդ բառակապակցությունը դեռևս 1945թ. հոկտեմբերի 19-ի «Tribune»-ում** հրապարակած իր էսսեում, որից հետո այն մտել է տեղեկատվական շրջանառության մեջ:

ՄՊ-ի դարաշրջանը բնորոշող այլ արտահայտությունների արմատները տանում են դեպի **Ուինսթոն Չերչիլի** Ֆուլտոնում (ԱՄՆ) 1946թ. մարտի 5-ին արտասանած հայտնի ճառը, երբ նա շրջանառության մեջ դրեց «երկաթե վարագույր» բառակապակցությունը: Այս առիթով նկատենք, որ անհամեմատ ավելի նվազ տեղեկատվական տարածում գտան այդ ճառում Չերչիլի խոսքերն այն մասին, թե՛ «անգլերեն խոսող» եղբայրական ժողովուրդները պետք է միավորվեն բռնապետության դեմ պայքարելու նպատակով, ինչը փաստորեն «Էթնոկրատիկ» մոտեցում էր ծագած խնդիրների նկատմամբ:

ՄՊ-ի ընթացքում ԽՍՀՄ-ի դեմ ԱՄՆ ռազմավարությունը բնորոշող «գսպման քաղաքականություն» եզրի հեղինակն է Մոսկվայում ամերիկյան դեսպանատան աշխատակից **Ջորջ Քենանը**, որը 1946թ. Վաշինգտոն ուղղված իր զեկույցներում (դրանք ստացան «երկար հեռագիր» անվանումը) շարադրել էր «խորհրդային էքսպանսիայի» վերաբերյալ իր պատկերացումները (հատկանշական է, որ Ջ.Քենանը 1947-ին *«Foreign Affairs»* հանդեսում զետեղված իր հոդվածում կանխատեսել էր կոմունիստական համակարգի անկումը):

Վերոնշյալ եզրերը, անշուշտ, ընդամենը սահմանումներ էին, որոնք այս կամ այն ճշտությամբ (*ՄՊ* եզրից ձևականորեն դուրս են գտնվում, օրինակ, Կորեական, Վիետնամական և Աֆղանական պատերազմները, որոնցում կողմերն ավելի քան «տաք» պայքար էին մղում միմյանց դեմ) արտահայտում էին «կապիտալիստական» և «սոցիալիստական» «ճամբարների» առձակատումը Երկրորդ համաշխարհայինից հետո: Միննույն ժամանակ, «սառըպատերազմյան» եզրաբանությունը բնութագրում է այն տեղեկատվական-հոգեբանական միջավայրը, որում գրեթե կես դար գործում էին մրցակցող կողմերը:

ԱՄՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՆԱԽԱՐԱՐԸ ԵՎ ԻՐԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ

Դոնալդ Թրամֆելդի հեռացումը ԱՄՆ պաշտպանության նախարարի պաշտոնից որոշակի փոփոխություններ կարող է մտցնել Իրան-ԱՄՆ հարաբերություններում: Փաստորեն, ԱՄՆ ներկայիս վարչակազմից հեռացվեց մի անձնավորություն, որը բավական կոշտ վերաբերմունք ուներ Իրանի և նրա ներկայիս վարչակազմի նկատմամբ ու չնայած միշտ խուսափում էր կոշտ հայտարարություններից, այնուամենայնիվ, իրավացիորեն համարվում էր Իրանի դեմ պատերազմի կողմնակից:

Կենտրոնական հետախուզական վարչության նախկին ղեկավար Ռոբերտ Գեյթսի նշանակումը ԱՄՆ պաշտպանության նախարարի պաշտոնում մատնանշում է, առնվազն Իրանի հետ հարաբերությունների կտրվածքով, ԱՄՆ բարձր մակարդակով նոր քաղաքական գծի ձևավորման մասին:

Ռոբերտ Գեյթսը և իրանական հիմնախնդիրը

Ռոբերտ Գեյթսը և Զբիգնև Բժեզինսկին իրենց «նոր մոտեցումը» ԱՄՆ-Իրան հարաբերությունների հիմնահարցին շարադրել են 2004թ. «Իրան. նոր մոտեցման ժամանակ» (*Iran. Time for a New Approach*) հետազոտության մեջ՝ պատրաստված Արտաքին հարաբերությունների խորհրդի (*Council on Foreign Relations*) հովանավորությամբ:

Գեյթսի, այսպես կոչված, «իրատեսական» մոտեցումն իրանական հիմնախնդրին միայն որոշակի վերապահումներով կարելի է անվանել «նոր»: Այս քաղաքականության ակունքները գնում են դեռ 1998թ., երբ Բիլ Բլինթոնի դեմոկրատական վարչակազմի պետական քարտուղար Մադլեն Օլբրայթը հանդես եկավ Իրանի հետ հարաբերությունների կարգավորման հնարավորության մասին հայտարարությամբ:

Միևնույն ժամանակ, Բժեզինսկի-Գեյթս մոտեցումը, ի տարբերություն 1998թ. ամերիկյան հայտարարությունների, բավական համակարգված և հիմնավորված քաղաքական ռազմավարության տեսք է ստացել: Մրա պատճառը, թերևս, այն է, որ ի տարբերություն 1998թ. Իրանն այլևս Աֆղանստանով և սադամյան Իրաքով սեղմված պետություն չէ, այլ վերածվել է տարածաշրջանային հզոր ուժի կենտրոնի, առանց որի մասնակցության հնարավոր չէ լուծել որևէ կարևոր քաղաքական հիմնախնդիր:

«*Իրան. նոր մոտեցման ժամանակ*» հետազոտության հիմնական գաղափարներ կարելի է համարել.

1. Իրան-ԱՄՆ երկխոսության հաստատումը չպետք է սպասի բացարձակ ներդաշնակության հաստատման երկու պետությունների կառավարությունների միջև՝ **«պատմության ընթացքում ԱՄՆ-ը ունեցել է նորմալ և կառուցողական հարաբերություններ այն պետությունների հետ, որոնց քաղաքականությունը և փիլիսոփայությունը (հեղինակները նկատի ունեն գաղափարախոսությունը- Մ.Ս.) չեն համընկել ամերիկյանի հետ»:**
2. ԱՄՆ-Իրան հարաբերությունները չեն կարող կարգավորվել, մինչև Իրանը հաշվի չնստի ամերիկյան մոտեցումների և շահերի հետ, այն է՝ հրաժարվել միջուկային զենքի ստեղծման ցանկություններից և դադարեցնել աջակցությունն ահաբեկչական կազմակերպություններին: Միևնույն ժամանակ, սա **«չի կարող նախապայման լինել երկխոսություններ սկսելու համար»¹:**

¹ Այս մոտեցումը կտրականապես տարբերվում է ներկայիս վարչակազմի մոտեցումներից, որոնք միջուկային հիմնախնդրի լուծումը համարում են անհրաժեշտ հիմք երկխոսության սկսման համար:

3. Գործ ունենալով Իրանի հետ՝ Վաշինգտոնը պետք է հրաժարվի վարչակարգի փոփոխման քաղաքականությունից, քանի որ այն օգտակար չէ և ավելի է բարդացնում հարաբերությունները:
4. ԱՄՆ-ը պետք է շարունակի կանխարգելիչ քաղաքականություն վարել Իրանի միջուկային պետության չվերածման ուղղությամբ: Հետազոտության հեղինակների կարծիքով՝ Իրանին կարելի է համոզել չստեղծել միջուկային զենք հիմնականում մեկ ճանապարհով. ապացուցել, որ ԱՄՆ-ը չի սպառնում նրա ազգային շահերին: Իրանի միջուկային ծրագրի հիմնախնդիրը պետք է լուծել խաղաղ ճանապարհով: Հետաքրքրական է հետևյալ գաղափարը. **«Հաշվի առնելով այն, որ Վաշինգտոնն ամեն դեպքում մեղավոր կճանաչվի, եթե անգամ Իսրայելը միակողմանի հարվածներ հասցնի Իրանին, պետք է Իսրայելին պարզ հասկացնել, որ այդպիսի քայլը կարող է ուղղակիորեն հարվածել ԱՄՆ շահերին»:**
5. Իրանին պետք է ներքաշել ներիրաքյան և ներաֆղանական կարգավորման գործընթացների մեջ:

Հարկ է նշել, որ Գեյթսի տեսակետը Իրանի հետ հարաբերությունների կարգավորման անհրաժեշտության մասին քիչ փոփոխվեց անգամ այն բանից հետո, երբ Իրանում նախագահական ընտրություններում հաղթանակ տարավ Մահմուդ Ահմադինեժադը, որը և շուտով աչքի ընկավ մի շարք հակաամերիկյան և հակաիսրայելական հայտարարություններով: Հակառակը, «նոր մոտեցման» կողմնակիցները սկսեցին ԱՄՆ-ին անուղղակիորեն մեղադրել Իրանում ծայրահեղականների հաղթանակի մեջ, քանի որ ԱՄՆ հարձակվողական և հակաիրանական հայտարարություններն ավելի են արմատականացնում իրանական ներքաղաքական գործընթացը:

2005թ. ընթացքում Գեյթսը և Բժեզինսկին հանդես եկան առաջարկություններով, որպեսզի ԱՄՆ-ը ընդգրկվի Իրան-«Եվրատեղյակ» բանակցային գործընթացի մեջ և միննույն ժամանակ Իրանի համար տնտեսական տեսակետից որոշակի ձեռնտու քայլեր ձեռնարկի: Ինչպես հայտնի է, 2006-ի ամռանից ԱՄՆ-ը ուղղակիորեն ներգրավվեց Իրանի հետ բանակցությունների մեջ, իսկ հոկտեմբերին ԱՄՆ-ը վերջապես կատարեց Իրանի երկարամյա պահանջը՝ վերսկսել ինքնաթիռների մասերի վաճառքը իրանական ավիաընկերություններին:

Այս առումով կարելի է նշել, որ ԱՄՆ քաղաքական ընտրանում, մասնավորապես Ռոբերտ Գեյթսի պաշտպանության նախարար նշանակվելուց հետո, ուժեղացել են Իրանի հետ հարաբերությունների կարգավորման կողմնակիցների դիրքերը:

Մակայն կարելի է, արդյոք, եզրակացնել, որ Գեյթսի նշանակումը ԱՄՆ պաշտպանության նախարարի պաշտոնում կարող է հիմք հանդիսանալ Իրան-ԱՄՆ հարաբերությունների կարգավորման համար¹:

Իրան - 2004 և Իրան - 2006

2004թ., երբ պատրաստվել էր ներկայիս ԱՄՆ պաշտպանության նախարարի զեկույցը Իրանի մասին, իսլամական հանրապետությունը գտնվում էր որակապես այլ իրավիճակում, քան ներկայումս: Այդ իրավիճակի բաղադրիչներն էին.

- ԱՄՆ որոշակի հաջողությունները Իրաքում և դրանից բխող՝ Իրանի վրա հնարավոր հարձակման հեռանկարները,
- Իրանի ներքաղաքական դաշտում «բարեփոխիչների» դեռևս ամուր դիրքերը:

¹ Գեյթս-Բժեզինսկու զեկույցում նշվում է, որ Իրանը դժվար թե դառնա ԱՄՆ դաշնակիցը, ինչպես եղել է մինչև 1979 թվականը: «Հարաբերությունների կարգավորում» հասկացությունը հիմնականում մատնանշում է թշնամանքի վերացում, միջպետական երկխոսության վերահաստատում և տնտեսական համագործակցություն: Այս մոտեցումը պայմանականորեն կարելի է անվանել իրանա-ամերիկյան հարաբերությունների «սաուդականացում»:

Այս պարագաներում իրանական ղեկավարությունը, հավանաբար, պատրաստակամորեն կգնար ԱՄՆ-ի հետ երկխոսության, ինչպես, օրինակ, արվեց ԵՄ «եռյակի» հետ միջուկային հիմնախնդրի հարցում:

2006թ. իրավիճակը միանգամայն այլ է: Իրանական քաղաքական դաշտում գերակայում են «պահպանողականները», իրաքյան կառավարությունը հիմնականում բաղկացած է իրանամետ շիական քաղաքական ուժերի ներկայացուցիչներից¹: Ինչ վերաբերում է Իրանի վրա հարձակմանը, ապա դրա հնարավորությունը բավական նվազել է, ինչը Թեհրանին թույլ է տալիս ավելի ազատ և անվարան աշխատել միջուկային զենքի ստեղծման ուղղությամբ: Միննույն ժամանակ, ներկայումս իրանական իշխանական բուրգի վերևում գտնվող պահպանողականներն իրանա-ամերիկյան հարաբերությունների կարգավորմանն ունեն ոչ միանշանակ մոտեցում, քանի որ այդ հարաբերություններից է նաև կախված իրանական ներքաղաքական գործընթացների այս կամ այն ուղղությունը: ԱՄՆ-ի հետ հակամարտությունը կարելի է համարել իրանական ծայրահեղականների իշխանության ղեկին գտնվելու հիմնական լեգիտիմացնող գործոններից:

Այսօր արդեն պարզ է, որ իրանական նախապայմանները ԱՄՆ-ի հետ հարաբերությունների կարգավորման համար բոլորովին այլ են լինելու:

Սա բավական բարդացնելու է ԱՄՆ քաղաքական դաշտում Իրանի հետ հարաբերությունների վերականգնման կողմնակիցների վիճակը, և սա վերաբերում է նաև ԱՄՆ նորանշանակ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսին: Նրա «նոր մոտեցման» քաղաքականության տապալումը մեծ հարված կհասցնի «իրանամետների» դիրքերին՝ ամրապնդելով Իրանի դեմ ռազմական ուժ կիրառելու կողմնակիցների տեսակետը թե՛ նեոպահպանողականների և թե՛ դեմոկրատների ճամբարում:

Մևակ Սարուխանյան
«Նորավանք» հիմնադրամ

¹ Օրերս Արտաքին հարաբերությունների խորհրդի փակ նիստում քննարկվել է Իրանի հետ ԱՄՆ բանակցությունների հարցը: Քննարկմանը մասնակցել է Իրաքում ԱՄՆ դեսպան Ջալմայ Խալիլզադը, որն ասել է, թե Բուշի հանձնարարականով վերջին մեկ տարվա ընթացքում աշխատել է կազմակերպել իրանա-ամերիկյան միջպետական գաղտնի բանակցություններ՝ նվիրված Իրաքի հիմնախնդրի կարգավորմանը (հիմնական հարցերից է եղել նաև Իրաքի բաժանումը շիական, սուննիական և քրդական մասերի. այս ծրագրի հիմնական հեղինակն ու լոբբիստն է ԱՄՆ նախկին պետքարտուղար, «հին պահպանողական» Ջեյմս Բեյքերը, որի ազդեցությունը հանրապետական կուսակցությունում վերջին մեկ տարվա ընթացքում զգալիորեն աճել է): Սակայն, ըստ Խալիլզադի, նա ստիպված է եղել դադարեցնել աշխատանքն իրանցիների հետ, քանի որ նրան զանգահարել և ԱՄՆ նախագահի անունից այդ մասին ասել է Ազգային անվտանգության գծով խորհրդական Սթեֆըն Հեյլին:

«ԴԱՇՆԱՅԻՆ» ԻՐԱՔԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Նոյեմբերի 12-ին Իրաքի վարչապետ Նուրի ալ-Մալիքին հայտարարեց Բաղդադի կենտրոնական կառավարությունում սպասվող «համընդհանուր վերադասավորումների» մասին: Թեև նախնական տեղեկությունների համաձայն, վերադասավորումները գերազանցապես առնչվելու են կառավարության ոչ ուժային հատվածին, սակայն ալ-Մալիքիի նման հայտարարությունը կարող է իրականում վկայել իրաքյան կառավարության մոտալուտ անկման մասին: Ողջ հոկտեմբեր ամսին ընթացող ինտենսիվ բանակցությունների արդյունքում ալ-Մալիքիին այդպես էլ չհաջողվեց կյանքի կոչել սեպտեմբերի վերջից շրջանառության մեջ գտնվող Իրաքում հակամարտող խմբավորումների միջև խաղաղության հաստատման իր ծրագիրը¹: Ավելին՝ վերջին իրադարձությունները ցույց տվեցին, որ միջդավանական ու միջ-էթնիկ հակասություններն Իրաքում հասել են աննախադեպ խորության²: Այդ համատեքստում կառավարության վերադասավորումները չեն խոսում կենտրոնական իշխանության օգտին, հետևաբար չեն կարող ունենալ երաշխավորված հետևանքներ:

Մյուս կողմից՝ Նուրի ալ-Մալիքիի կառավարության հավանական անկումը կարող է վկայել առնվազն երկու հանգամանքների մասին:

Ալ-Մալիքիի կառավարությունը 2005թ. դեկտեմբերի 15-ի իրաքյան խորհրդարանական ընտրություններից հետո բավական դժվարությամբ՝ մոտ կես տարվա բանակցությունների արդյունքում, ձևավորված (2006թ. հունիսի 8-ին) կառավարություն է: Եթե վերջինիս անկման կանխատեսումն իրականություն դառնա, ապա այն կարող է նախ և առաջ վկայել Իրաքի նկատմամբ ամերիկյան նոր քաղաքականության մեկնարկի մասին, քանի որ այսօր Իրաքի կենտրոնական կառավարության միակ երաշխավորն ամերիկյան ռազմուժն է: Պատահական չէ, որ Իրաքի վարչապետի հայտարարությունը մեջտեղ եկավ ԱՄՆ Կոնգրեսի միջանկյալ ընտրություններից հետո:

Երկրորդ՝ նման պայմաններում Բաղդադի կենտրոնական կառավարության անկումը գործնականում գրեթե անհնարին կդարձնի ոչ դաշնային (ոչ ֆեդերալ) սկզբունքի հիման վրա կառուցված նոր կենտրոնական գործադիր մարմնի ստեղծումն Իրաքում:

«Դաշնային» Իրաք

2006թ. հոկտեմբերի 11-ին Իրաքի խորհրդարանն ընդունեց հատուկ օրենք, որով սահմանվում է դաշնային շրջանների ստեղծման մեխանիզմը: Դաշնային շրջանների ստեղծումը նախատեսված էր դեռևս 2005թ. հոկտեմբերի 15-ի հանրաքվեով ընդունված Իրաքի նոր սահմանադրությամբ³: Ըստ հոկտեմբերի 11-ի օրենքի, Իրաքի 18 նահանգներից յուրաքան-

¹ 2006թ. հոկտեմբերի 3-ին ծրագիրն անգամ պաշտոնական հավանության էր արժանացել Իրաքի խորհրդարանի շիա և սուննի պատգամավորների կողմից: Հաշտեցման գործում ալ-Մալիքիի կառավարության ձեռնարկած քայլերի գազաթնակետը, թերևս, պետք է համարել հոկտեմբերի 20-ին Մեքքայում շիա և սուննի 50 կրոնական գործիչների միջև կազմակերպված հանդիպումը, որի ժամանակ պետք է ընդունվեր հաշտության հաստատման փաստաթուղթը, սակայն հանդիպումը շոշափելի արդյունք չտվեց:

² Շիաների վերահսկողության ներքո գտնվող Իրաքի ազգային անվտանգության նախարարության սեպտեմբերի 30-ին տարածած տեղեկության համաձայն, Իրաքի խորհրդարանի սուննի պատգամավորների ամենամեծ խմբավորման «Իրաքի փոխհամաձայնության ճակատի» ղեկավար Ադնան ալ-Գուլայմիի թիկնազորի պետը կապված է եղել սուննի զինյալների հետ՝ մասնակցելով կառավարական մարմինների և կոալիցիոն ուժերի դեմ մի շարք հարձակումների պլանավորմանը: Նոյեմբերի 14-ի առավոտյան սուննիների ենթակայության ներքո գտնվող Իրաքի բարձրագույն կրթության նախարարության վրա կազմակերպված հարձակման ժամանակ գերեվարվեցին նախարարության ավելի քան 100 աշխատակիցներ, որոնց մի զգալի մասը նույն օրն ազատ արձակվեց: Սուննիները շտապեցին այդ ակցիայի մեջ մեղադրել շիաների վերահսկողության ներքո գործող Իրաքի ներքին գործերի նախարարությանը: Նոյեմբերի 15-ին Իրաքի ներքին գործերի նախարար Ջավադ ալ-Բոլանիի (շիա) կարգադրությամբ քրեական հետապնդում սկսվեց Իրաքի ազդեցիկ սուննի «Մահմեդական գիտնականների ասոցիացիայի» նախագահ Չարիթ ալ-Դհարիի նկատմամբ՝ հարուցելով սուննի գործիչների դժգոհությունը: Նոյեմբերի 19-ին սեփական տնից առևանգվեց Իրաքի առողջապահության փոխնախարար Ամար Սաֆարը (շիա): Ամերիկյան տվյալների համաձայն, եթե 2006թ. հունվարին Իրաքում մեկ օրվա ընթացքում գրանցվում էր բախումների, հարձակումների միջինը 80 դեպք, իսկ մայիսին՝ 100, ապա 2006թ. հոկտեմբերին այդ թիվը հասավ 180-ի:

³ Ըստ այդ սահմանադրության, դաշնային շրջանները կարող են ձևավորվել մեկ կամ մի քանի նահանգներից՝ համաձայն տվյալ նահանգ(ներ)ի խորհուրդների 2/3-րդի որոշման: Հատկանշական է, որ սահմանադրությամբ Իրաքի պետական եկամուտները բաշխվում են այդ թվում ըստ նահանգներում եղած բնական ռեսուրսների: Այսինքն, օրինակ՝ նավթով հարուստ նահանգները (իսկ հետագայում՝ դաշնային շրջանները) ստանում են եկամուտների մեծ մասը:

չուրը կարող է դաշնային շրջաններ ձևավորել կամ միանալ տվյալ շրջանին տեղի՝ նահանգային, օրենսդիր մարմնի պատգամավորների 2/3-րդի համաձայնությամբ անցկացված հանրաքվեի դրական արդյունքի դեպքում: Միաժամանակ, հոկտեմբերի 11-ի օրենքը 18 ամսով հետաձգեց ինքնավար շրջանների ստեղծման կարգի ընդունումը:

Թեև սուննիական «Իրաքի փոխհամաձայնության ճակատ»-ը ու շիական երկու խմբակցություններ՝ ալ-Սադրի խմբակցությունը և «Ալ-Ֆադիլա»¹, բոլկոտեցին քվեարկությունը, սակայն խորհրդարանում շիական ամենամեծ խմբակցությունները՝ «Իրաքյան միավորված ալյանս»-ը ու վարչապետ ալ-Մալիքիի «Հիզբ ալ-Դավահի», ինչպես նաև քուրդ պատգամավորները միաձայն ընդունեցին ավելի քան 200 հոդված պարունակող օրինագիծը:

Հոկտեմբերի 11-ի օրենքի ընդունումն առաջին հերթին նշանակում է հունիսի 7-ին Իրաքում «Ալ-Ղայիդայի» առաջնորդ Աբու Մուսաբ ալ-Ջարբավիի սպանությամբ մեկնարկած քաղաքական կոնսենսուսի ավարտ: Հիմնական տեղաշարժը գրանցվել է շիական իշխող քաղաքական ուժերի դիրքորոշման մեջ: Եթե 2006թ. ամռան սկզբին շիաների պատկերացումները սահմանափակվում էին իրաքյան կոալիցիոն կառավարությունում քաղաքական ամենամեծ ուժը լինելով², ապա նույն ամռան վերջից սկսած նավթով հարուստ Իրաքի հարավային՝ շիական, նահանգների ինքնավարության ձեռքբերումը դարձավ նրանց առաջնային նպատակը:

Շիական իշխող քաղաքական ուժերի մոտ նման արագ տրասնֆորմացիան առաջին հերթին պետք է կապել իսրայելա-լիբանանյան պատերազմի արդյունքում տարածաշրջանում Թեհրանի դերակատարության աճի և որպես հետևանք Լիբանանում շիական *Հիզբալլահ* խմբավորման ազդեցության ընդլայնման հետ, որոնք էլ ի վերջո հանգեցրին Իրաքի շիական քաղաքական ուժերի միջև առկա տարաբնույթ հակասությունների մի զգալի մասով ստորադասմանը ինքնավարության գաղափարին³:

Երկրորդ կարևոր հանգամանքն այն է, որ Իրաքում շիական ինքնավարության ստեղծմամբ Իրանը ձգտում է իրատեսական քաղաքականության հարթություն տեղափոխել իսրայելա-լիբանանյան պատերազմի արդյունքում ձեռք բերված տեղեկատվական-հոգեբանական առավելությունը: Շիական ինքնավարության կամ, իրականում, շիական նոր պետության երևան գալը Պարսից ծոցի ափին, որի անվտանգությունը կարող է մի զգալի մասով կախված լինել Թեհրանից, կարճ ժամանակ անց լիովին նոր հարթություն կտեղափոխի միջուկային տերության կարգավիճակին մոտեցող Իրանի քաղաքական ազդեցությունը ոչ միայն ռազմավարական մեծ արժեք ներկայացնող Պարսից ծոցում, այլև ողջ Մերձավոր Արևելքում:

Երրորդ՝ հոկտեմբերի 11-ի օրենքի ընդունումը, ինչն անհնար կլիներ ամերիկյան կողմի առարկության դեպքում, կարող է նաև նշանակել, որ օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Վաշինգտոնում արդեն որոշում էր կայացվել Իրաքը դաշնային երեք շրջանների բաժանելու մասին: Չի բացառվում, որ ԱՄՆ նախկին պետքարտուղար Ջեյմս Բեյթերի ու նախկին կոնգրեսական Լի Համիլթոնի գլխավորած «Iraq Study Group»-ի կողմից իրաքյան խնդրի վերաբերյալ 2006թ. դեկտեմբերին Բուշ-կրտսերի վարչակազմին ներկայացվելիք հանձնարարականները պաշտոնական Վաշինգտոնի համար որևիցե նոր դրույթ չպարունակեն:

Ընդհանուր առմամբ, հոկտեմբերի 11-ի օրենքի ընդունման փաստը պետք է ընկալել որպես Իրաքում առկա ապախնտեգրացիոն իրավիճակի բավական խոսուն ցուցիչ⁴:

¹ Շիա առաջնորդ Մուքթադա ալ-Սադրի և «Ալ-Ֆադիլա» կուսակցության ղեկավարության պատկերացմամբ, օրենքը, որն ուղղակի ճանապարհ է հարթում Իրաքի հարավային ինը նահանգներում շիական ինքնավարության ստեղծման համար, ի վերջո հանգեցնելու է շիական նահանգներում իրենց ազդեցության կրճատման:

² Շիաներին են պատկանում Իրաքի փոխնախագահներից մեկի, վարչապետի, ազգային անվտանգության, ներքին գործերի, նավթի ու ֆինանսների նախարարների, ինչպես նաև երկրի նախագահի ազգային անվտանգության գծով խորհրդակցականի պաշտոնները:

³ Այդ տեսանկյունից հատկանշական էր ամերիկյան ռազմուժի կողմից հոկտեմբերի 17-ին Մուքթադա ալ-Սադրի ավագ օգնական շեյխ Մազեն ալ-Սայեդի ձեռքավորությունից հետո ալ-Սադրի, «Իրաքի իսլամական հեղափոխության բարձրագույն խորհրդի» ու «Հիզբ ալ-Դավահի» համատեղ պահանջը՝ ազատ արձակել ալ-Սայեդին: Վերջինս ազատվեց հաջորդ օրը:

⁴ Գարելի է առանձնացնել հատկանշական երկու փաստ: Սեպտեմբերի սկզբին իրաքյան Քուրդիստանի նախագահ Մասուդ Բարզանին կոչ արեց քրդական երեք նահանգներում գործող պետական հաստատություններում Իրաքի պետական դրոշները փոխարինել իրաքյան Քուրդիստանի դրոշներով: Հոկտեմբերի 15-ին սուննիական «Մեսաիայի ալյանս» կազմակերպությունը հայտարարեց կենտրոնական Իրաքի Բաքիլ, Վասիթ և Դիլալա նահանգներում իսլամական էմիրության ստեղծման մասին՝ կոչ անելով սուննի արաբներին հավատարմության երդում տալ էմիրության առաջնորդ շեյխ Աբու Օմար ալ-Բադդադիին:

Փոփոխություններ ԱՄՆ իրաքյան քաղաքականությունում

Ի տարբերություն նոյեմբերի 7-ին նախորդող ժամանակահատվածի, երբ Բուշ-կրտսերի վարչակազմի իրաքյան քաղաքականության համար անմիջականորեն կարևոր էին ԱՄՆ Կոնգրեսի միջանկյալ ընտրությունների արդյունքները, Վաշինգտոնի իրաքյան այսօրվա քաղաքականության մեջ էական դեր են խաղալու երեք գործոններ.

- ամերիկյան վարչակազմի համար ամենախոցելի ժամանակահատվածը (մինչև նոյեմբերի 7-ն ընկած շաբաթները) այլևս անցյալում է,
- միջանկյալ ընտրությունների արդյունքում ԱՄՆ-ում ձևավորված իշխանական հավասարակշռությունը թույլ կտա Վաշինգտոնին ավելի համակողմանի և ռազմավարական բնույթի որոշման հանգել Իրաքի հարցում,
- մյուս կողմից, սակայն, Բուշ-կրտսերի վարչակազմը և դեմոկրատներն ունեն առավելագույնը երկու տարի՝ իրավիճակն Իրաքում «շտկելու» համար. ո՛չ դեմոկրատները, ո՛չ հանրապետականները չեն ցանկանա 2008թ. նախագահական ընտրություններին գնալ իրաքյան բեռով:

Թեև նոյեմբերի 13-ին Սպիտակ տանը Իսրայելի վարչապետ Էհուդ Օլմերթի հետ կայացած հանդիպման ժամանակ ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը, փաստորեն, բացառեց Իրաքի հարցով Իրանի հետ բանակցություններ սկսելու հավանականությունը, սակայն պաշտոնական Վաշինգտոնի նման մերժողական կեցվածքը բացատրվում է «թույլ դիրքերով Թեհրանի հետ բանակցություններ վարելու» մտահոգության առկայությամբ:

Ակնհայտ է, որ իրաքյան խնդրի առնչությամբ Իրանի հետ բանակցություններ վարելու Վաշինգտոնի մոտեցումներում փոփոխություններ իրականացնելու սկզբունքային որոշումը կայացված է: Նոյեմբերի 8-ին 1991-1993թթ. ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչությունը (ԿՀՎ) գլխավորած Ռոբերտ Գեյթսի¹ (ով 2004-ից ի վեր բազմիցս արտահայտվել է իրաքյան խնդրի կարգավորման գործում Իրանին ներգրավելու օգտին) նշանակումը Պենտագոնի ղեկավարի պաշտոնում² վկայում է այդ մասին:

Հոկտեմբերի 15-ին ԱՄՆ Պետքարտուղարության Իրաքի գծով համակարգող Դևիդ Սաթերֆիլդը հայտարարեց, թե Միացյալ Նահանգները պաշտոնապես քննարկում է իրաքյան խնդրով Իրանի հետ ուղղակի բանակցություններ սկսելու ժամանակացույցը: Փաստորեն, ամերիկյան կողմի մոտ խնդիրն արդեն հանգում է «ի՛նչ և ինչպե՛ս բանակցել» հարցին:

Ներկայումս ԱՄՆ իրաքյան նոր քաղաքականության մշակմամբ զբաղվում են առնվազն երեք խմբեր: Հոկտեմբերի սկզբից ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության գծով խորհրդական Սթեֆըն Հեյլիի ղեկավարությամբ Պետքարտուղարության, Պենտագոնի և ԿՀՎ-ի ներկայացուցիչներից բաղկացած խումբն իրականացնում է համապատասխան մշակումներ³: Մյուս խումբը ԱՄՆ նախկին պետքարտուղար Ջեյմս Բեյքերի ու նախկին կոնգրեսական Լի Համիլթոնի գլխավորած «Iraq Study Group»-ն է, որի անդամ Ռոբերտ Գեյթսը, ինչպես ասվեց, նշանակվել է ԱՄՆ պաշտպանության նախարար⁴: Եվ վերջապես, զուտ ռազմական տեսանկյունից, իրաքյան ռազմավարության մշակումներ են ընթանում նաև Պենտագոնում՝ ԱՄՆ Շտաբերի պետերի միավորված կոմիտեի նախագահ գեներալ Փիթեր Փեյսի ղեկավարությամբ⁵:

¹ Ռոբերտ Գեյթսը ԿՀՎ-ում աշխատանքի է անցել 1966թ.՝ որպես վերլուծաբան: 2005թ. փետրվարին Գեյթսը հայտարարեց, թե իրեն առաջարկվել էր նորաստեղծ Ազգային հետախուզության տնօրենի (*Director of National Intelligence*. առաջին ու ներկայիս տնօրենն է Իրաքում ԱՄՆ նախկին ղեսպան Ջոն Նեգրոպոնտեն) պաշտոնը, սակայն նա մերժել է այդ առաջարկը:

² Ամերիկյան աղբյուրների մատուցմամբ, սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ԱՄՆ պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսը և Բուշ-կրտսերի ազգային անվտանգության գծով խորհրդական Սթեֆըն Հեյլին լուրջ ջանքեր են գործադրել Ռամսֆելդին Գեյթսով փոխարինելու ուղղությամբ: Ըստ որոշ տեղեկությունների, այդ ուղղությամբ աշխատել են նաև ԱՄՆ նախագահի աշխատակազմի ղեկավար Էնդրյու Քարոլը և անգամ Բուշ-կրտսերի տիկինը՝ Լորա Բուշը:

³ ԱՄՆ Ազգային անվտանգության խորհրդում այդ աշխատանքն անմիջականորեն համակարգում է Հեյլիի տեղակալ Ջեք Քրոյ Երկրորդը:

⁴ ԱՄՆ Սենատը Գեյթսի թեկնածությունը պետք է հաստատի դեկտեմբերի սկզբին:

⁵ Նոյեմբերի 20-ին հայտնի դարձավ, որ Պենտագոնում ընթացող մշակումները հիմնականում կենտրոնացած են երեք ուղղությունների վրա՝ ավելացնել Իրաքում առկա ամերիկյան զորքերի թվակազմը (*“Go Big”*), ամերիկյան զորքերը դուրս բերել Իրաքից (*“Go Home”*) կամ կրճատելով Իրաքում գտնվող ամերիկյան զորքերի թիվը՝ փոխարենը երկարացնել այդ երկրում նրանց գտնվելու ժամկետը (*“Go Long”*):

Հետևություններ և հեռանկար

Քաղաքական տեսանկյունից որոշումն արդեն կայացվել է: Ակնհայտ է դառնում, որ Իրաքն աստիճանաբար վերածվում է դաշնային, իսկ միգուցե՝ համադաշնային (կոնֆեդերատիվ) պետության: Ըստ ամենայնի, Միացյալ Նահանգներին հաջողվել է համապատասխան պայմանավորվածության հանգել նման սցենարին դեմ գնացող հիմնական երկրների՝ Մաուրիտանիայի, Արաբիայի և Թուրքիայի հետ: Այդ մասին կարող են վկայել Հյուսիսային Իրաքում՝ իրաքյան Քուրդիստանում մեկնարկած ամերիկա-թուրքական անվտանգության ոլորտի համատեղ ծրագրերը¹ և Էր-Ռիյադի որոշումը Իրաքի հետ սահմանի ողջ երկայնքով կառուցել \$500 մլն արժողությամբ մոտ 900կմ-ոց տարանջատիչ պատ:

Խնդիրն ավելի բարդ է թվում ռազմական տեսանկյունից: Ակնհայտ է, որ Վաշինգտոնի պատկերացմամբ ստեղծված իրադրությունը չի կարող պահպանվել: Մյուս կողմից՝ առկա պայմաններում ամերիկյան զորքերի դուրսբերումն Իրաքից առաջին հերթին մեծացնելու է Իրանի ռազմաքաղաքական ազդեցությունը Իրաքում, ինչն իր հերթին ուղղակի հանգեցնելու է Թեհրանի ճնշման ուժեղացմանը Պարսից ծոցի արաբական միապետությունների նկատմամբ, ուր կան բավական մեծաթիվ շիական համայնքներ: Ծոցի հեռանկարը ռազմավարական նշանակություն ունի ԱՄՆ-ի համար:

Հետևաբար, պետք է ենթադրել, որ Վաշինգտոնում, թերևս, ընտրեն երրորդ տարբերակը՝ զորքերի կրճատում և Իրաքում նրանց առաքելության հիմնական նպատակների փոփոխություն: Այսինքն՝ անվտանգության ապահովման առօրյա խնդիրները կարող են փոխանցվել Բաղդադի կենտրոնական կառավարությանը կամ դաշնային շրջաններին: Վերջիններս ստիպված են լինելու զսպել գրոհայիններին կամ բախվել համընդհանուր անկայունության հետ: Մյուս կողմից՝ ամերիկյան սահմանափակ զորախմբի ներկայությունն Իրաքում Իրանի պարագայում կարող է ունենալ զսպիչ նշանակություն²:

*Մարգիս Հարությունյան
«Նորավանք» հիմնադրամ*

¹ Քրդական Էրբիլ նահանգում Պենտագոնը ծրագրում է թուրքական աջակցությամբ հիմնել խոշոր ռազմակայան:

² Այն, որ Վաշինգտոնում կարող են ընտրել “Go Long” տարբերակը, անուղակիորեն վկայում են հետևյալ փաստերը: Հոկտեմբերի 11-ին ԱՄՆ ցամաքային զորքերի Գլխավոր սպայակոյտի պետ, գեներալ Փիթեր Շումեյթերը հատարաբեց, թե Պենտագոնում ծրագրում են մինչև 2010թ. պահպանել ներկայումս Իրաքում առկա ռազմուժի մակարդակը: Իսկ նոյեմբերի 15-ին հայտնի դարձավ, որ ամերիկյան ռազմուժի Կենտրոնական հրամանատարությունը (CENTCOM), որի աշխարհագրական պատասխանատվության մեջ է մտնում նաև Սերժավոր Արևելքը, ԱՄՆ Ֆլորիդա նահանգի Տամպա Բեյ քաղաքի մոտ գտնվող «ՄըքԴիլ» ռազմաօդային բազայում գտնվող իր կենտրոնակայանը տեղափոխելու է Կատարում գտնվող «Ալ-Ռուդեյդ» ռազմաօդային բազա:

СТРАНЫ ОДКБ ВООРУЖАЮТ ПРОТИВНИКА АРМЕНИИ

Противоречия в ОДКБ

Начальник Генерального Штаба ВС Армении Михаил Арутюнян обвинил Таджикистан в том, что тот «выстраивает союзнические отношения в военной области с возможными противниками своего союзника». Об этом сообщило 3 марта информагентство «Грани.ру» со ссылкой на одного из участников консультаций начальников Генштабов стран Организации Договора о коллективной безопасности (ОДКБ), которые проходили в Москве 2 ноября. Речь идет о недавнем соглашении между Таджикистаном и Азербайджаном о военно-техническом сотрудничестве. Согласно источнику агентства «Грани.ру», Арутюнян адресовал свои претензии не только Душанбе, но и Москве. «Всем известно, - якобы заявил Михаил Арутюнян, - что Азербайджан является вероятным противником Армении, однако некоторые члены ОДКБ считают возможным военное сотрудничество с Азербайджаном».

Другие информационные источники не подтверждали, но и не опровергали эту информацию. Однако даже если Михаил Арутюнян и не высказывался в подобном духе, противоречие принципам ОДКБ в отношениях между рядом стран-участниц договора и Азербайджана налицо.

Военное партнерство Баку с членами ОДКБ

Как известно, 1 июня в Баку между главами оборонных ведомств был подписан договор о военном сотрудничестве между Азербайджаном и Таджикистаном. В соответствии с соглашением между странами будет осуществляться сотрудничество в военно-технической сфере, в проведении совместных учений, подготовке военных кадров. По сообщению азербайджанских СМИ, министр обороны Азербайджана Сафар Абиев на пресс-конференции после церемонии подписания заявил: «Сегодня делается первый шаг в двустороннем военном сотрудничестве. Считаю, что это соглашение окажет положительное влияние на расширение взаимных связей стран в области обороны, а также послужит созданию стабильности на Кавказе и Средней Азии. Подписанное сегодня соглашение – это шаг в углублении отношений между странами». Также он отметил, что странам следует вместе бороться с международным терроризмом и «агрессивным сепаратизмом в регионе». Двустороннее соглашение носит бессрочный характер. В дальнейшем предполагается вносить поправки и коррективы с учетом требований времени. Также Сафар Абиев отметил, что странам следует вместе бороться с международным терроризмом и «агрессивным сепаратизмом в регионе».

В то же время Статья 1 Договора о коллективной безопасности гласит: «Государства-участники не будут вступать в военные союзы или принимать участие в каких-либо группировках государств, а также в действиях, направленных против другого государства-участника» (см. *Приложение 1* в конце бюллетеня). А Душанбе не только входит в военно-технический союз с Азербайджаном, являющимся противником Армении, но и намерен помогать Баку в борьбе с «агрессивным сепаратизмом в регионе», что в переводе с официальной азербайджанской риторики является прямой угрозой как Нагорно-Карабахской Республике, так и Республике Армения.

Более того, военное сотрудничество с Азербайджаном намерена развивать и Россия. Еще во время своего визита в Баку 24 января вице-премьер – министр обороны РФ Сергей Иванов

прямо заявил: «Что касается поставок вооружений и техники, то мы готовы вооружать и Армению, и Азербайджан с учетом баланса сил и собственной национальной безопасности».

Сергей Иванов также сообщил, что «возможно создание на Каспии чего-то похожего на «Блэксифор» на Черном море», то есть межгосударственной силовой структуры. По словам Иванова, «это будут некие объединенные силы, в которых, помимо Минобороны, будут участвовать пограничники и спецслужбы для противодействия реальным угрозам и вызовам, которые есть на Каспии».

Отметим, что соглашение о военно-техническом сотрудничестве между Россией и Азербайджаном было подписано еще 26 февраля 2003 года. Тогда Сергей Иванов заявил, что Россия не будет поставлять дестабилизирующих вооружений ни Армении, ни Азербайджану и возможные поставки российского оружия в Азербайджан «не приведут к изменению баланса сил в регионе». Между тем это соглашение позволяет осуществлять полномасштабное военное и военно-техническое сотрудничество, предусматривает подписание документов о поставках вооружений, военной техники, запчастей к ним, а также подготовку военных кадров.

Теперь Москва делает шаги в направлении реализации сотрудничества, которое до этого оставалось на бумаге. Перед визитом Ильхама Алиева в Москву, где он 9 ноября встретился с Владимиром Путиным, в газете «Коммерсант» появилась информация о том, что Кремль намерен предложить Баку стратегическое партнерство с Россией.

По данным «Коммерсанта» из источников, близких к администрации президента, Владимир Путин на встрече намерен был предложить президенту Азербайджана реализовать план углубления «стратегического партнерства», кроме всего прочего, сняв бюрократические препоны на пути закупок Азербайджаном в России относительно дешевого оружия российского производства. Ранее Россия ограничивала эти закупки, стремясь не допустить военного перевеса Азербайджана в противостоянии с другим российским союзником в регионе – Арменией.

Москва уже довольно продолжительное время усиливает свое сотрудничество с Баку как в экономическом, так и политическом плане. А в условиях увеличения военного бюджета Баку – с \$600 млн в 2006 году до прогнозируемого \$1 млрд в 2007 году – Азербайджан может стать чисто экономически весьма привлекательным рынком сбыта для российского ВПК.

Военное партнерство Баку с другими странами СНГ

Впрочем, Азербайджан активно сотрудничает в военной сфере и закупает вооружения и у других стран, в частности членов ГУАМ, а также импортирует вооружения из ряда стран СНГ.

Несмотря на то, что официальная информация о военных закупках практически отсутствует (отметим, что Азербайджан, в отличие от Армении, не предоставляет в ООН данных об импорте обычных вооружений), однако в азербайджанской прессе появилась информация о том, что в течение нескольких лет Азербайджан закупил у Беларуси, которая также является членом ОДКБ, порядка 270 единиц танков Т-72. По крайней мере, согласно отчету ООН по продаже обычного вооружения на мировом рынке, Беларусь поставила в 2005г. в Азербайджан 19 танков Т-72.

Другим поставщиком вооружений для Азербайджана в течение всего периода независимости является Украина. Согласно данным ООН, в 2005г. Украина продала Азербайджану 25 танков Т-72, 2 БМП-1, 11 установок 9А52 (РСЗО «Смерч») и 23 артиллерийские установки ПМ-38. Отметим, что по своим характеристикам 300-мм реактивная система залпового огня «Смерч» примыкает к категории оружия массового поражения, так как при дальности стрельбы до 70 км полный залп 12 снарядов покрывает территорию площадью 672 000 квадратных метров.

Хотя при этом 24 мая на пресс-конференции в Ереване начальник Главного штаба Украины генерал-полковник Сергей Кириченко заявил, что информации о поставках вооружения в Азербайджан не соответствует действительности. «Украина не вмешивается в конфликты между стра-

нами и не поставляет вооружений одной из сторон. Это касается как легкого вооружения, так и танков, и самолетов», – сообщил Сергей Кириченко. В то же время поставки вооружений Азербайджану со стороны Украины как во время Карабахской войны, так и в последующий период не являются секретом и периодически попадали в отчеты ООН по конвенционному оружию.

Стоит отметить также информацию о закупках вооружений со стороны официального Баку, которую распространило издание «Реальный Азербайджан» (в настоящее время закрыто). Так, по данным издания, все 270 танков, закупленных у Беларуси, являлись списанными, а покупка каждого из них обошлась бюджету страны в \$1 млн. По сведениям «Реального Азербайджана», оборонное ведомство закупило минометы 1941 года производства (страна-поставщик не указывается, хотя речь идет о минометах советского производства). Кроме того, издание сообщает о закупке из Украины 85-мм пушек D-44 производства конца 40-х гг., которые были сняты с производства в конце 50-х годов. По данным «Реального Азербайджана», эти пушки размещены на линии соприкосновения с армией обороны Нагорного-Карабахской Республики.

*Самвел Мартиросян
Фонд «Нораванк»*

ԹԻՖԼԻՍԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ. ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Որպես թիֆլիսահայ համայնքում «Նորավանք» ԳԿՀ իրականացրած հետազոտության վերջաբան ներկայացնում ենք մեր հետևություններն ու առաջարկությունները, ինչը մեր հետազոտությանը կհաղորդի նաև կիրառական բնույթ:

Հետևություններ

Հայաստանի Հանրապետությունը պետք է հստակ դիրքորոշում ունենա Թբիլիսիում հայկական համայնքը պահպանելու կամ հայրենադարձություն կազմակերպելու ուղղությամբ, հատկապես Ջավախքի հիմնախնդրի օրըստօրե սրման միտումները հաշվի առնելով¹: Նշված դիրքորոշումը պետք է բխի մեր ազգային անվտանգության ընդհանուր հայեցակարգից:

Եթե ռազմավարական տեսակետից այդ համայնքն իր դերակատարումն ունի ՀՀ-ի համար, ապա խիստ անհրաժեշտ է մոտեցումներ մշակել համայնքի պահպանման, իսկ այնուհետև նաև զարգացման համար: Այսօր օրակարգային կարող է լինել միայն համայնքի պահպանման հարցը: Իսկ զարգացման մասին մոտ ապագայում դեռևս խոսելը վաղ է, քանի որ համայնքը գտնվում է քայքայման եզրին: Առկա է ներքին ռեսուրսների նկատելի սահմանափակություն, և խոսքը ոչ միայն ֆինանսական, այլ նաև մտավոր և գաղափարական կարողությունների մասին է:

Եթե համայնքի պահպանման համար հստակ քաղաքականություն չմշակվի, ապա մեր հայրենակիցների մի մասը կփոխի հայկական ինքնությունը, իսկ մյուս մասն ուղղակի կարտագաղթի, ընդ որում՝ ոչ դեպի Հայաստան:

Հավանաբար, ներկա փուլում կարելի է մի կողմից՝ իրականացնել որոշակի միջոցառումներ համայնքի պահպանման ուղղությամբ, մյուս կողմից՝ մտածել աստիճանական հայրենադարձության կազմակերպման մասին, որպեսզի այդ գործընթացը հնարավորինս անցնում իրականացվի թե՛ ՀՀ-ի, թե՛ թիֆլիսահայության համար:

Ներկայումս թիֆլիսահայ համայնքում որևէ միջոցառում իրականացնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է հաշվի առնել որոշ առանձնահատկություններ, որոնց մի մասն օբյեկտիվ է.

1. Թիֆլիսահայությունն իրեն որպես համայնք չի ընկալում: Դեռևս չի մարել հիշողությունն այն մասին, որ իրենք ապրում են իրենց տանը, որ իրենք այս քաղաքի տերն են, այն կառուցվել է հայկական կապիտալի կողմից և հայկական հմուտ վարպետների ձեռքով և այլն: «Տիրոջ» զգացողությունն է պատճառը, որ ինքնապահպանման մեխանիզմները խոր արմատներ չունեն այստեղ: Նաև այս զգացողությունն է պատճառը, որ վրացական միջավայրում հայկական տարրն ընկալվում է որպես առաջնային (եթե ոչ ամենաառաջին) խոչընդոտներից մեկը Վրաստանի մայրաքաղաքում վրացական գերիշխանության վերջնական հաստատման ճանապարհին:
2. Թիֆլիսահայությունն ունի Ջավախքի հիմնախնդիրը: Սա շատ լուրջ գործոն է և ազդում է թիֆլիսահայության վարքաբանության վրա: Թիֆլիսահայությունն իրեն պատանդի կարգավիճակում է տեսնում, ինչը խորացնում է բարոյահոգեբանական անջրպետը ջալախահայերի և թիֆլիսահայերի միջև: Ջավախքի խնդրի միտումնավոր բացասական

¹ Տեղին է հիշատակել Արցախի հիմնախնդրի արժարժման սկզբնական փուլում՝ 1988-1991թթ.՝ մինչ ռազմական գործողությունները, Բաքվի և Ադրբեջանի մյուս շրջաններում ապրող հայության ճակատագիրը:

երանգավորմամբ արժարծուժը վրացական ներքաղաքական քարոզչական դաշտում նպաստում է թիֆլիսահայության շրջանակներում քննադատական վերաբերմունքի ձևավորմանը ջավախահայության նկատմամբ:

3. Թիֆլիսահայ համայնական կյանքի կազմակերպումը ընթանում է տարերայնորեն և չի ղեկավարվում որևէ կենտրոնից: Լուրջ խնդիր է համայնքում ներքին միասնության բացակայությունը, որը, ըստ մեր կողմից հարցման ենթարկվածների, մի քանի պատճառ ունի: Դրանք են՝ համայնքի ակտիվ հատվածի անհատական նկրտումները (ամբիցիաները), համայնական կյանքին բնորոշ ինքնապահպանման մեխանիզմների (իմունիտետի) բացակայությունը, անկախացումից ի վեր հայ մտավոր և ֆինանսական ներուժի արտագաղթը երկրից, բոլորի կողմից ընդունելի առաջնորդի բացակայությունը, անգամ վրացական հատուկ ծառայությունների նպատակառոտ դրած քաղաքականությունը և այլն:
4. Վրաստանում անկախության տարիներին ձևավորված օլիգարխների շրջանում ազգությամբ հայի գրեթե չենք հանդիպի. եթե կան, ապա տեղի հայությանը (անգամ ակտիվ հատվածին) նրանք ծանոթ չեն: Այսինքն՝ 20-րդ դ. վերջին - 21-րդ դարի սկզբին, ի տարբերություն 19-րդի վերջի - 20-րդի սկզբի, հայկական հզոր կապիտալ Թիֆլիսում չձևավորվեց: Հայտնի է, սակայն, որ ազգային փոքրամասնության ֆինանսատնտեսական ակտիվությունը և հզորությունը կարող էր ոչ միայն նպաստել համայնքի ներքին կյանքի աշխուժացմանը, այլև խթանել ազգային վերագարթոնքը:
5. Ակնհայտ է համայնքի ներսում գաղափարական վակուումը, ինչը փորձ է արվում լրացնել առավելապես սպառողական հասարակություններին բնորոշ արժեհամակարգով: Անշուշտ, ժամանակակից աշխարհին հարիր սկզբունքների ընդհանուր ուղղվածությունը և գաղափարական հիմքերը (մարդու իրավունքների գերակայությունը, էթնիկ, կրոնական և այլ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը և այլն) թույլ են տալիս հայկական համայնքի՝ որպես էթնիկ փոքրամասնության, հիմնախնդիրների եթե ոչ լուծումը, ապա գոնե բարձրաձայնելը: Թիֆլիսի հայկական ՀԿ-ների շրջանակներում առկա է այն գիտակցությունը, որ նշված սկզբունքների համատեքստում կարելի է արժարծել հայկական հիմնախնդիրները, որ այդ սկզբունքներն անհրաժեշտ է դիտարկել որպես ռեսուրս և փորձել օգտագործել ազգապահպանման խնդրում: Այստեղ խնդիրն այլ հարթության մեջ է. թե որքանով են Վրաստանի ամենաբարձր ատյանների հռչակած ժողովրդավարական արժեքները գործնականում ընկած իրենց իսկ որոշումների կայացման հիմքում (ինչպես նաև վրաց հասարակության վարքաբանության հիմքում): Սա արդեն առանձին հարցադրում է և պահանջում է առանձին քննարկում, քանի որ վերաբերում է Վրաստանի հասարակության զարգացման ընդհանուր միտումներին և տրամաբանությանը: Բայց եթե հետևենք միայն անկախ փորձագետների գնահատականներին, ապա «վարդերի հեղափոխությունը» էապես թուլացրել է երկրի ոչ միայն քաղաքական կուսակցությունները և քաղաքական մրցակցությունը, այլև քաղաքացիական հասարակության առաջին ծիլերը: Հզոր (վրացական ծավալներով) հասարակական կազմակերպությունների առավել ակտիվ անդամները մտան կառավարություն. արդյունքում՝ բացահայտվեց այդ ազդեցիկ ՀԿ-ների **քաղաքական** (*ոչ քաղաքացիական*- Թ.Վ.) **բնույթը**¹: Այսինքն՝ ներկա զարգացումների տրամաբանությունը մեծ հույսեր չի ներշնչում, թե Վրաստանում կձևավորվի քաղաքացիական հասարակություն, որտեղ էթնիկ փոքրամասնությունների իրավունքները կլինեն լիովին պաշտպանված:

¹ Валериан Долидзе, «Политические партии и партийное строительство в Грузии», «Центральная Азия и Кавказ», Центр социально-политических исследований, Швеция, 2 (38), 2005, сс. 52 - 53.

Առաջարկություններ

